ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 31.01.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/01

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.12.2017թ. թիվ 03/26-3/5-18 գրությամբ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ 08402180) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 29.12.2017թ. թիվ 08/15.3/23849-17 և 08/15.3/23885-17 գրությունների հիման վրա 29.12.2017թ. թիվ 03/26-3/5-18 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 29.12.2017թ. թիվ 08/15.3/23849-17 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև 2015թ. դեկտեմբերի 21-ին կնքված թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24 Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պայմանագրի կողմ հանդիսացող «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն չի կատարել 2017թ. հունվարի 30-ին կնքված համաձայնագրով նախատեսված ճանապարհահատվածների ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24 պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի պահանջներով 2017 թվականի դեկտեմբերի 12-ից պայմանագիրը միակողմանի լուծվել է»:

Ի լրումն վերը նշված գրությանը ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարությունը 29.12.2017թ. թիվ 08/15.3/23885-17 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև 2015թ.-ի դեկտեմբերի 21-ին կնքված թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24 Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պայմանագրի կողմ հանդիսացող «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի պայմանագրի լուծման հիմքերը:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական

տեխնոլոգիաների նախարարության ներկայացուցիչներ Կարեն Գասպարյանը և Հրաչյա Բաղդասարյանը:

3. «Գավառի ՃՇՇ» ՍՊԸ-ի և ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Խորհուրդը դիմել է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2017թ. Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի տնօրեն Արշավիր Հակոբյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/01 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.12.2017թ. թիվ 03/26-3/5-18 գրությունը, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 29.12.2017թ. թիվ 08/15.3/23849-17 և 08/15.3/23885-17 գրությունները, ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև 21.12.2015թ. կնքված N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24» ծածկագրով պետական գնման պայմանագիրը և դրա շրջանակներում 27.01.2016թ. կնքված N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24/2016» ծածկագրով համաձայնագիրը, «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի ՃՊ և ՇՄ բաժնի պետի նույն ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենին 22.11.2017թ. ներկայացրած զեկուցագիրը, «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի կողմից 31.01.2018թ. թիվ 218-07/58 Խորհրդին ներկայացրած տեղեկանքը, Պատվիրատուի կարծիքն ու դիրքորոշումը.

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ -ի միջև 21.12.2015թ. կնքվել է N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24» ծածկագրով պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների.
- 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է նույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և կատարման ժամկետ է սահմանվում մինչև 31.12.2020թ. ներառյալ.
- 2.1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.
- 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից խախտումն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև 21.12.2015թ. կնքված է N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24» ծածկագրով պետական գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների տեխնիկական պահանջների 3-րդ կետի

համաձայն՝ ընթացիկ ձմեռային (ձմեռվա ժամանակահատված) պահպահման պահանաջներն են՝

- Ճանապարհների կոնստրուկտիվ տարրերի և երթևկելի մասերում թույլ չտալ աղբի, ձյան և սառույցի առկայություն.

- Ձյան առատ տեղումների ընթացքում թույլ չտալ 5 սմ-ից ավել շերտի գոյացում: ուժեղ ձնաբքերի դադարելուց անմիջապես հետո սկսել և ոչ ավելի քան 4 ժամվա ընթացքում ավարտել ճանապարհների մաքրումը.

- Մերկասառույցի դեմ պայքարի համար ժամանակին կիրառել աղի և ավազի ցանումը.

-Աշխատանքների կատարման ընթացքում ապահովել երևեկության անվտանգությունը.

- Առատ ձյան տեղումների և ուժեղ ձնաբքերի ժամանակ, ճանապարհների մաքրման տեխնիկապես անհնարինության կամ աննպատակահարմարության դեպքում, ճանապարհների փակումն ու բացումը կատարել Պատվիրատուի և ավտոտեսչության տեղական մարմինների համաձայնությամբ.

- Ստեղծել շուրջօրյա հերթապահություն, վարել տվյալների գրանցման մատյան և ամեն օր, ժամը 6-8, 12-14 և 18-20 Պատվիրատուի հերթապահությանը տվյալներ հայտնել տեղում եղանակի և ճանապարհների վիճակի մասին.

- Սպասարկվող ավտոճանապարհների տարածքում ունենալ առնվազն մեկ ստացիոնար հենակետ՝ ապահոված հոսանքով, կապի միջոցներով բանվորների և մեխանիզատորների համար ջեռուցվող հանգստյան սենյակով.

- Ապահովել պահպանման մակարդակի բնորոշ ցուցանիշները ՀՀ կառավարության 04.11.2010թ. թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ, ձմեռային պահպանման մակարդակների գնահատման ու կատարված աշխատանքների ընդհանուր կարգի» մեթոդական ցուցումների 3-րդ աղյուսակի «Ճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման ցուցանիշների առաջադրվող պահանջների» համաձայն:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև 21.12.2015թ. կնքված N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24»

ծածկագրով պետական գնման պայմանագրի շրջանակներում 27.01.2016թ. կնքված N «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24/2016» ծածկագրով համաձայնագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է Պայմանագրով և նույն համաձայնագրով սահմանված կարգով Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել Պայմանագրով նախատեսված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանքներ)՝ համաձայն նույն Համաձայնագրի N1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի և Աշխատանքների արդյունքը հանձնել Պատվիրատուին, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել Աշխատանքները և վճարել դրանց համար:

Նույն համաձայնագրի գնման ժամանակացույցի համաձայն՝ Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 2017թ. 1-ից 4-րդ եռամսյակները:

«Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենը 22.11.2017թ. թիվ 218-07/703 գրությամբ դիմել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի ղեկավարին՝ հայտնելով, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն պարբերաբար թերացել է Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական ճանապարհների ընթացիկ ամառային պահպանման աշխատանքներում: ՊՈԱԿ-ի համապատասխան պաշտոնատար անձանց կողմից բազմիցս բանավոր զգուշացումներից և հորդորներից հետո վիճակը չի փոխվել, որից հետո կատարվել է պահում: Միաժամանակ, ըստ նշված գրության, ընթացիկ ձմեռային աշխատանքների համար նախապատրաստական փուլում չի կուտակվել աղի մինիմալ պաշար, ինչի բացակայությունը թույլ չի տա պատշաճ իրականացնել ընթացիկ ձմեռային աշխատանքները:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 19.01.2017թ. կայացած նիստի ժամանակ Ընկերության տնօրենը չհերքեց, որ Ընկերությունը որոշակիորեն թերացել է պայմանագրային պարտավորությունների կատարման հարցում՝ անդրադառնալով այն փաստին, որ Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային պահպանման պահանաջ հանդիսացող՝ մերկասառույցի դեմ պայքարի համար աղի և ավազի ցանումը Ընկերության

կողմից պատշաճ չի իրականացվել, մասնավորապես, օգտագործվել է միայն ավազ՝ առանց աղի: Սակայն, Ընկերության տնօրենի հավաստիացմամբ, վերոնշյալ խախտումն Ընկերության կողմից թույլ է տրվել ընդամենը մեկ անգամ, իսկ Պայմանագրով նախատեսված՝ ճանապարհների մաքրման հետ կապված այլ աշխատանքները վերջինիս կողմից պատշաճ և ժամանակին իրականացվել են:

Խորհրդի կողմից ուղղված այն հարցին, թե արդյոք ընթացիկ ձմեռային աշխատանքների համար նախապատրաստական փուլում ճանապարհների մաքրման համար նախատեսված աղի մինիմալ պաշար չկուտակելը Ընկերության կողմից հանդիսանում է Պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ աղի պաշարի նախնական կուտակման դրույթ Պայմանագրով նախատեսված չէ:

Ի պատասխան Խորհրդի հարցմանը՝ «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ը Խորհրդին ուղղված 31.01.2018թ. թիվ 218-07/58 գրությամբ ներկայացրել է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի կողմից աշխատանքների ոչ պատշաճ կատարման հետևանքով պահումների վերաբերյալ տեղեկանքը, որով հայտնել է, որ 2017թ. հոկտեմբերի 5-ին «Հայավտոճան տնօրինություն» ՊՈԱԿ-ի աշխատակցի այցի ընթացքում արձանագրվել է, որ Մ-1 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ճանապարհի երթևեկելի մասի ճաքալցման աշխատանքները թերի են և ավարտված չեն, կողային առուները մաքրված չեն թափվածքներից և ճանապարհին առկա են աղբ և օտար առարկաներ: Ըստ այդմ, աշխատանքները ավարտելու և թերությունները վերացնելու համար՝ ՀՀ կառավարության 04.11.2010թ. թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն Կատարողին տրվել է 15 օր ժամանակ, սակայն աշխատանքները դարձյալ կատարվել են թերի և ոչ վերջնական, որի համար 2017թ. հոկտեմբեր ամսի կատարողականից պահվել է 711,287 ՀՀ դրամ: 2017թ. նոյեմբերի 30-ի այցի ընթացքում արձանագրվել է, որ ճանապարհի երթևեկելի մասի վրա առկա է ձյան շերտ, որը նույնպես ժամանակին չի վերացվել, ինչի համար նոյեմբեր ամսի կատարողականից պահվել է 220,337 ՀՀ դրամ:

Պատվիրատուն 29.12.2017թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն, և հայտնել, որ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի և «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ի միջև 2015թ. դեկտեմբերի 21-

ին կնքված թիվ ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24 Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների կատարման պայմանագրի կողմ հանդիսացող «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն չի կատարել 2017թ.-ի հունվարի 30-ին կնքված համաձայնագրով նախատեսված ճանապարհահատվածների ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքները և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-15/1-ՏԾԻԳ-16/1-24 պայմանագրի 2.1.3 կետի «ա» ենթակետի պահանջներով 2017թ. դեկտեմբերի 12-ից պայմանագիրը միակողմանի լուծվել է:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն պայմանագրով նախատեսված աշխատանքը նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան չկատարելով՝ խախտել է Պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը:

Խորհուրդն գտնում է, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն պատշաճ կերպով չի կատարել Պայմանագրով նախատեսված աշխատանքներն, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով

նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց առ այն, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2017թ. «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ 08402180) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ